ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 87-Ա

«06» հուլիսի 2020 թվական

գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 38-րդ հոդվածով 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերի պահանջներով՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի 2021 թվականի բյուջետային գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծել բյուջեի նախագծի մշակման աշխատանքները համակարգող խումբ և հաստատել խմբի անհատական կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի զարգացման հնգամյա ծրագրին համապատասխան 2021 թվականի համայնքային բյուջեի նախագծի մշակման աշխատանքների իրականացման ժամանակացույցը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

«06» հուլիսի 2020 թվական
գյուղ Ամասիա

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ամասիա համայնքի
ղեկավարի 2020 թվականի հուլիսի 6-ի
N 87-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՄԲԻ

1.Ղուկասյան Արտավազդ – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի տեղակալ,
2, Էգնատոսյան Սամվել – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
3.Մանուկյան Արթուր – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի տեղակալ՝ զարգացման գծով,
4.Մկրտումյան Արթուր – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի օգնական,
5.Խասիկյան Արմինե - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիայի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ- հաշվապահ,
6. Դավթյան Արտեմ – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու անդամ,
7, Հարությունյան Արա – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու անդամ,
8. Միրզոյան Արման- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ավագանու անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

Հավելված 2

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Ամասիա համայնքի
ղեկավարի 2020 թվականի հուլիսի 6-ի
N 87-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

Ժամկետը	Աշխատանքները	Պատասխանատու կատարող
Հուլիսի 16-25	Համայնքի 2021 թվականի բյուջետային քաղաքականության հիմնական ուղղությունների սահմանում: Ընդունել ի գիտություն, որ 2021 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերը կազմելիս պետք է հաշվի առնվեն Ամասիա համայնքի զարգացման ծրագրերի հիմնական ուղղությունները:	Համայնքի ղեկավար և ավագանի
Հուլիսի 16-25	Մեթոդական ցուցումների, եկամուտների ու ծախսերի հաշվարկման սահմանված ձևերի տրամադրում բաժիններին, վարչական ղեկավարներին և համայնքային կազմակերպություններին	Գլխավոր մասնագետ- հաշվապահ
Հուլիսի 25- ից Օգոստոսի 10-ը	Եկամուտների նախահաշիվների կազմում և ծախսերի հիմնական ուղղությունների որոշում	Գլխավոր մասնագետ- հաշվապահ
Օգոստոսի 30	Բաժինների, վարչական ղեկավարների, համայնքային կազմակերպությունների կողմից ծախսային հայտերի, ծրագրերի և դրանց հիմնավորումների կազմում և ներկայացում համայնքի ղեկավարին: Ընդունելի գիտություն, որ բյուջետային ֆինանսավորման հայտերը ներառում են կապիտալ բնույթի ծախսերի մասով սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծանախահաշվային փաստաթղթերը, իսկ ընթացիկ ծախսերի գծով՝ հաշվարկ-հիմնավորումները:	Բաժիններ,վարչական ղեկավարներ, համայնքային կազմակերպություններ
Սեպտեմբերի 1-5	Ներկայացված հայտերի, ծրագրերի նախնական քննարկում ներկայացնողների մասնակցությամբ: Հաշվի առնել, որ բյուջետային ֆինանսավորման հայտերը ներկայացնելիս հաշվի առնել համայնքի բնակիչներից, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտներից ստացված առաջարկությունները:	Համայնքի ղեկավար, բաժիններ,
Սեպտեմբերի 1-26	Բյուջեի նախագծի նախնական տարբերակի կազմում	Գլխավոր մասնագետ- հաշվապահ
Սեպտեմբերի	Բյուջեի նախագծի նախնական տարբերակի	Համայնքի ղեկավար

26-30	քննարկում	
Սեպտեմբերի 30 - հոկտեմբերի 1	Բյուջեի նախագծի նախնական տարբերակի մեջ առաջարկված փոփոխությունների կատարում	Համակարգող խումբ
Հոկտեմբերի 2-10	Բյուջեի նախագծի վերջնական տարբերակի քննարկում	Համայնքի ղեկավար, համակարգող խումբ
Հոկտեմբերի 11-15	Բյուջեի նախագծի քննարկում համայնքի ղեկավարիմոտ	Համայնքի ղեկավար
Հոկտեմբերի16-20	Բյուջեի նախագծի հանրային քննարկումներ	Համայնքի ղեկավար
Հոկտեմբերի21-31	Քննարկումների արդյունքներով բյուջեի նախագծում փոփոխությունների և լրացումների կատարում,հաշվի առնելով նաև պետական բյուջեից համայնքի բյուջեին տրվող հատկացումների չափը: Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի կազմում	Գլխավոր մասնագետ- հաշվապահ
Նոյեմբերի1-դեկտեմբերի10	Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի ուղարկում փորձաքննության	Աշխատակազմի քարտուղար
Դեկտեմբերի 11-15	Համայնքի բյուջեի մասին ավագանու որոշման նախագծի ներկայացում ավագանու անդամներին	Համայնքի ղեկավար
Դեկտեմբեր 21-25	Բյուջեի քննարկում և հաստատում ավագանու կողմից	Համայնքի ավագանի
Հունվարի 1	Ֆինանսական տարվա սկիզբ	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 88-Ա

«06» հուլիսի 2020 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՄԵՂՐԱՇԱՏ) ՔԱՂԱՔԱՑԻ ՂՈՒԿԱՍ ՍՐԱՊԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿՍՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍԸ ԵՎ ԱՆԱՍՆԱՇԵՆՔԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ, 3-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ և 35-րդ կետերի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Մեղրաշատ բնակավայրում համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության 0,075942 հեկտար մակերեսով և բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակութաան 0,013318 հեկտար հողամասերի վրա քաղաքացի Ղուկաս Սրապի Մանուկյանի կողմից ինքնակամ կառուցված բնակելի տան մասը և անասնաշենքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Մեղրաշատ բնակավայրում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքում առկա 0,075942 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության և 0,013318 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասերի վրա քաղաքացի Ղուկաս Սրապի Մանուկյանի կողմից ինքնակամ կառուցված **304,03** քառակուսի մակերեսով բնակելի տան մասը և անասնաշենքը (հետագայում՝ շինություն) ճանաչել օրինական, այն համարել

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի սեփականությունը և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկել պետական գրանցման:

2. Օրինական ճանաչված և համայնքի սեփականություն համարված սույն որոշման 1-ին կետում նշված շինության և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված հողամասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի հրամանով հաստատված ձևին համապատասխան կազմված հատակագծերը կցվում է սույն որոշմանը:

3. Նշել, որ օրինական ճանաչված շինությունը՝

ա) չի գտնվում հաստատված պետական կամ համայնքային նշանակության քաղաքաշինական համալիր ծրագրերով նախատեսված գոտիներում,

բ) չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը,

գ) կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, այն կառուցված է քաղաքաշինական նորմերի ու կանոններին համապատասխան և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Օրինական ճանաչված շինության և համապատասխան հողամասի ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքի մասին գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Ղուկաս Սրապի Մանուկյանի (անձնագիր՝ AN 0277532, տրված՝ 29.11.2012թվականին, 021-ի կողմից, բնակության հասցե՝ Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան, Ծերենցի 5-րդ շենք, 1/1 բնակարան):

5. Օրինական ճանաչված շինության և համապատասխան հողամասի համար սահմանել վաճառքի հետևյալ գներն ու պայմանները՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 35-րդ կետի «ա» ենթակետի համաձայն ինքնակամ կառուցված բնակելի տների յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար վաճառքի գինը սահմանվում է բազային տուրքի 20-ապատիկի չափով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված XIV գոտում ընդգրկված Մեղրաշատ բնակավայրի համար սահմանված **0.055** գործակցի կիրառմամբ, **304.03** քառակուսի մետր արտաքին մակերեսով շինության վաճառքի գինը կազմում է՝

304,03 քառակուսի մետր X 20 000 դրամ X 0.055 = 334433 Հայաստանի Հանրապետության դրամ:

բ) Ինքնակամ շինության պահպանման և սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության և բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակութաան հողամասերի մեկ քառակուսի մետր հողամասի կադաստրային արժեքը Մեղրաշատ բնակավայրում սահմանված է 222 Հայաստանի Հանրապետության դրամ, շինության պահպանման ու

սպասարկման համար նախատեսված **759,42** քառակուսի մետր մակերեսով և 133,18 քառակուսի մետր հողամասերի ուղղակի վաճառքի գինը կազմում է՝

893 քառ. մետր X 222 դրամ = 198246 Հայաստանի Հանրապետության դրամ:

Սահմանված չափերով ձևավորված շինության և հողամասերի ուղղակի վաճառքի ընդհանուր գինը կազմում է՝

532679 (հինգ հարյուր երեսուներկու հազար վեց հարյուր յոթանասունինը) Հայաստանի Հանրապետության դրամ:

գ) Որոշման սույն կետի <<բ>> կետով ձևավորված վաճառքի ընդահանուր գնին հավելվում են տվյալ միավորի նկատմամբ մինչև օտարումը համայնքի անվամբ գույքային իրավունքների պետական գրանցման համար իրականացված վճարները՝ վճարման անդորրագրերի հիման վրա:

դ) Ինքնակամ շինությունն իրականացրած անձի կողմից՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում գնման նախապատվության առաջարկը չընդունվելու կամ գնման նախապատվության առաջարկն ընդունելուց հետո 30-օրյա ժամկետում օրինականացված կառույցի և դրա համար սահմանված կարգով առանձնացված հողամասի վաճառքի գները չվճարելու դեպքում 5 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է գրավոր առաջարկություն՝ կառույցը վարձակալելու վերաբերյալ:

ե) Ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից կառույցի վարձակալության իրավունքից ևս հրաժարվելու դեպքում այն վաճառվում կամ օգտագործման է տրամադրվում հրապարակային սակարկություններով՝ աճուրդի կամ մրցույթի ձևով, «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

«06» հուլիսի 2020 թվական
գյուղ Ամասիա

Հողամասի Հատակագիծ

Հաստատում եմ՝
Համայնքի ղեկավար Զ.Հարությունյան
«07» 2020թ

_____ ին Հողհատկացման հիմքը _____

ՇԻՐԱԿ | Ամասիա գ.Մեղրաշատ (Համայնք) | _____ (Հասցե)

Մասշտաբ 1: 500



	Հողամասի						Շինության					
Մակերեսը (հա)	0.075942 հա 0.013318 հա	Թեմման կետեր	Կոորդինատներ X	Կոորդինատներ Y	Գծային չափեր	Սահմանակից հողօգտագործողներ	Հիմնական տան/շինության հատակագծի համար	Գործառնական նշանակությունը	Թեմման կետեր	Կոորդինատներ X	Կոորդինատներ Y	Գծային չափեր
Ծածկագիրը		1	8389962.2244	4525368.3635	2.03		1	ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՄԱՍ	10	8389964.4955	4525368.9450	1.95
		2	8389961.9269	4525370.3771	8.01				11	8389964.0784	4525370.8486	2.20
Նպատակային նշանակությունը	ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ	3	8389960.7605	4525378.2806	23.32				2	8389961.9269	4525370.3771	
		4	8389955.7683	4525401.0600	4.80		2	ԱՆԱՍՆԱՇԵՆՔ	4	8389955.7683	4525401.0600	6.50
		5	8389954.7396	4525405.7541	23.01				12	8389962.1176	4525402.4514	5.93
		6	8389976.6270	4525412.8543	39.55				13	8389963.4020	4525396.5905	5.72
Գործառնական նշանակությունը	ԱՅԼ ՀՈՂԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ	7	8389985.0941	4525374.2188	8.00				14	8389968.9894	4525397.8150	14.90
		8	8389977.3393	4525372.2334	8.70				15	8389972.1791	4525383.2605	2.68
		9	8389968.9060	4525370.0742	4.55				16	8389974.7970	4525383.8342	11.88
Հողամասը ծանրաբեռնված է		10	8389964.4955	4525368.9450	2.34				8	8389977.3393	4525372.2334	8.71
		1	8389962.2244	4525368.3635					9	8389968.9060	4525370.0742	9.76
									17	8389966.8167	4525379.6078	6.20
									3	8389960.7605	4525378.2806	

Կատարող Ա.Առաքելյան (Անուն,ազգանուն) 06.05.20թ.

Որակավորման վկայականի համարը 007 Տրման ամիս ամսաթիվ 05.12.2011թ
Իրավաբանական անձի 63.1119262 (ՀՎՀՀ գրանցման համարը) «Արսեն Առաքելյան» ԱՁ (անվանումը)

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Հավելված N 3

Անուն,ազգանուն

Մարզ Շիրակ Համայնք Ամասիա գ. Մեղրաշատ Հասցե

Մասշտաբ 1:200



ՏՆՕՐԵՆ	Ա. Առաքելյան	06.05.20թ.	«Արսեն Առաքելյան» ԱՁ Վկայական N 007 Տրվ. 05.12.2011թ	թերթ	թերթեր

Հավելված N 3 (շարունակություն)

Շինությունների բնութագիր

ՀՀ	Նպատակային նշանակություն	Գործառնական նշանակություն	Հարկ	Հարկայնություն	Մակերեսները (քմ)		Բարձրությունը (մ)	Ծավալը (խմ)	Կառուցման տարեթիվը	Տանիքի նյութը				Ավարտվածության աստիճանը				Դռների շինանյութի տեսակը	Միջհարկային ծածկի նյութը		Արտաքին հարդարումն ըստ կողմերի				
					օրինական	ինքնակամ				թիթեղ	շիֆեր	կղմինդր	այլ նյութ	անավարտ	մինչև 50%	50-80%	80% և ավելի		փայտ	երկաթբետոն	սրբատաշ	երեսապատված	սվաղած	ապակեպատ	առանց արտաքին հարդարման
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26
1	բնակ	բնակելի տան մաս	I	1		1.86	2.4	4.46	2019	V							V	տուֆ	V						4V
1-1	բնակ	աստիճանահ.				2.06			2019																
2	բնակ	անասնաշենք	I	1		111.28	4.1	456.2	1992	V							V	տուֆ		V					4V
2-1	բնակ	անասնաշենք	I	1		78.75	2	157.5	2018	V							V	տուֆ	V						4V
2-2	բնակ	անասնաշենք	I	1		98.17	2.8	274.87	2019	V							V	տուֆ	V						4V
2-3	բնակ	անասնաշենք	I	1		11.91	2.2	26.2	2018	V							V	տուֆ	V						4V

Շինության ընդհանուր մակերեսը (քմ)	Այդ թվում	
	Օրինական կառուցված (քմ)	Ինքնակամ կառուցված (քմ)
27	28	29
304.03	0	304.03

Կատարող _____ (անձնագրություն) Ա.Առաքելյան (անուն, ազգանուն) 06.05.2020թ. (ամիս, ամսաթիվ)

Ստորագրման վկայականի 007 (համարը) 05.12.2011թ (տրման ամիս, ամսաթիվ)

Իրավաբանական անձի 63.1119262 (պետ գրանցման համարը) <<Արսեն Առաքելյան>> ԱՁ (անվանումը)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 89-Ա

«06» հուլիսի 2020 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՄԵՂՐԱՇԱՏ) ՔԱՂԱՔԱՑԻ ՂՈՒԿԱՍ ՍՐԱՊԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետի, 48-րդ և 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով քաղաքացի Ղուկաս Սրապի Մանուկյանի դիմումը

որոշում եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Մեղրաշատ բնակավայրում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 0,075942 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, այլ հողեր գործառնական նշանակության և 0,013318 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերի վրա Ղուկաս Սրապի Մանուկյանի կողմից ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված անշարժ գույքի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Մեղրաշատ բնակավայր,1-ին փողոց, փակուղի 1, շենք 4:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐՏԱՎԱԶԴ ՂՈՒԿԱՍՅԱՆ

«06» հուլիսի 2020 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 90-Ա

«13» հուլիսի 2020 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ, ԱՐԾՐՈՒՆ ՍԼԱՎԻԿԻ ԻՎԱՆՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետի, 48-րդ և 50-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Արծրուն Սլավիկի Իվանյանի դիմումը .

ո ր ո շ ու մ եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում տեղակայված, Արծրուն Սլավիկի Իվանյանի սեփականությունը հանդիսացող, 128,54 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անշարժ գույքի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայր, 2-րդ փողոց, տուն 54 :

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ

«13» հուլիսի 2020 թվական
գյուղ Ամասիա